

ԱԶԳԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ
ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՀԱՍՄԻԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Հայտնի է, որ դարձվածքները* առավել ցայտուն են արտահայտում տրվյալ լեզվի ազգային ինքնատիպությունն ու յուրահատկությունը և տվյալ ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթի հարստությունը: Դարձվածքները, կապված լինելով տվյալ ժողովրդի պատկերավոր մտածողության, օբյեկտիվ աշխարհի առարկաների ու երևույթների մասին նրա ունեցած պատկերացումների հետ, դժվար են թարգմանվում, իսկ ազգային երանգավորում ունեցող դարձվածքները՝ առավել ևս: Դրանց լիարժեք թարգմանությունը պահանջում է ստեղծագործական լուրջ մոտեցում, մտքի թռիչք և լավատեղյակություն ոչ միայն բնագրի լեզվին, այլև այդ լեզուն կրող ժողովրդի մշակույթին, պատմությանը, աշխարհագրությանը, ազգագրությանը, կենցաղին, սովորույթներին և այլն: Գեղարվեստական ստեղծագործության պատկերավոր միջոցների համակարգում իրենց կարևոր և ուրույն տեղն ունեն շմբագնված ներքին ձև ունեցող ԴՄ-ները: Այդ իսկ պատճառով գեղարվեստական երկի հաշոդ և ճաշակով թարգմանությունը շատ բանով կախված է տվյալ երկում ընդգրկված պատկերավոր դարձվածքների լիարժեք թարգմանությունից: Տարբեր ժողովուրդների պատկերավոր մտածողության առանձնահատկությունները թարգմանչին ստիպում են որոշել. «Վերարտադրե՞լ թե՞ չվերարտադրել փոխաբերականությունը և արդյո՞ք անպայման պահպանել թարգմանելի միավորի ոճական նրբերանգները, շանտեսելով, իհարկե, և նրա իմաստը, իսկ կորուստների անխուսափելիության դեպքում ի՞նչը զոհաբերել՝ տվյալ դարձվածքի հիմքում ընկած պատկերը, թե՞ նրա իմաստը»¹: Թարգմանչի համար կարևոր է տվյալ դարձվածքի ներքին ձևի կենսունակության և ազգային երանգավորման աստիճանի հարցը: Թարգմանության համար նպատակահարմար է օգտվել այն դասակարգումից, որտեղ դարձվածքները, ըստ գրանցում առկա ազգամշակութային բաղադրիչի, բաժանվում են երեք խմբի՝

1) Միջազգային դարձվածքներ՝ հիմնված համընդհանուր պատկերների վրա (the alpha and omega of something—սկիզբը և վերջը, to discover America—Ամերիկա հայտնագործել, to cross the Rubicon—Ռուբիկոնն անցնել):

2) Տեղայնորեն-նշույթավորված դարձվածքներ, որոնք հիմնված են շեզոք պատկերների վրա և չունեն ընդգծված ազգային երանգավորում (to wash one's hands—ձեռքերը լվանալ, to break one's heart—սիրտը կոտրել, a snake in the grass—թաքնված թշնամի կամ վտանգ):

3) Տեղայնորեն-նշույթավորված դարձվածքներ՝ վառ արտահայտված ազգամշակութային բաղադրիչով (to carry coals to Newcastle—մի բան տանել այնտեղ, որտեղ դրանից շատ կա, to catch the Speaker's eye—ձայն ստանալ Համայնքների պալատում, to set the Thames on fire—արտասովոր բան անել): Տեղային նշույթավորումը մենք ներկայացնում ենք ոչ թե լեզվի տարածքային տարբերակի, այլ ամբողջ լեզվի հետ առնչված (տվյալ դեպքում՝

* Քննության համար վերցրել ենք XIX—XX դդ. անգլիական և ամերիկյան գրողների 13 ստեղծագործություններից հանված դարձվածքները և դրանց հայերեն համապատասխանությունները՝ մոտ 300 դարձվածքային միավորներ (այսուհետև՝ ԴՄ), որոնցից մեր աշխատանքում ընդգրկել ենք միայն թարգմանական առավել ցայտուն օրինակները:

¹ С. В л а х о в, С. Ф л о р и н, Непереводимое в переводе, М., 1980, с. 199.

անգլերենի): Մեր կարծիքով, տեղայնորեն-նշույթավորված են այն դարձվածքները, որոնք արտացոլում են տվյալ ժողովրդի (անգլիացիների) կյանքի նյութական պայմանները, երկրի աշխարհագրությունը, պատմությունը, մշակույթը:

Օգտվելով այս դասակարգումից՝ կարելի է դարձվածքների յուրաքանչյուր խմբի համար թարգմանության օրինաչափ եղանակներ սահմանել: Առաջին խմբին պատկանող դարձվածքները որևէ դժվարություն չեն ներկայացնում թարգմանիչների համար, քանի որ նրանք օգտվում են պատրաստի համարժեքներից, որոնք համընկնում են եվրոպական շատ լեզուներում: Երկրորդ խմբի ԴՄ-ները, որոնք չեն պարունակում իրակություններ, թարգմանվող լեզվում կարող են ունենալ համարժեքներ, համանմանություններ (նույն իմաստն ունեցող, բայց տարբեր պատկերների վրա հիմնված զուգահեռ ձևեր), իսկ դրանց քաջակալության դեպքում թարգմանվում են բառացի կամ նկարագրական եզրանակով (անշուշտ, հաշվի առնելով տվյալ համատեքստի պահանջները): Երրորդ խմբի դարձվածքները, իրենց վրա կրելով ազգային կոլորիտի կնիքը, բընականաբար, չեն կարող ունենալ իրենց համարժեքները թարգմանվող լեզվում: Սակայն խիստ էական է, որ թարգմանության ժամանակ դարձվածաբանական համապատասխանություններն արտացոլեն բնագրի ազգային կոլորիտը: Նման դեպքերում սովորաբար ընտրվում է թարգմանության այն եղանակը, որն ամենից լավ է արտահայտում այդ կոլորիտը:

Վերջին տարիների ընթացքում ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում՝ երևան են եկել մեծ թվով ուսումնասիրություններ, որոնք լույս են սփռում թարգմանության սոցիալական բնույթի վրա: Թարգմանության սոցիալական կողմը այս կամ այն չափով իր լուսաբանումն է ստացել Լ. Ս. Բարխուդարովի, Վ. Ն. Կոմիսարովի, Ա. Դ. Շվեյցերի, Լ. Կ. Լատիշևի աշխատանքներում²: Նրանց կարծիքով թարգմանությունը ոչ միայն լեզվական, այլև սոցիալ-մշակութային երևույթ է, այն միջլեզվական հաղորդակցության մի բարդ պրոցես է, լեզուների և մշակույթների փոխազդեցության ոլորտ, որտեղ թարգմանությունը վարպետությունը պայմանավորված է ոչ միայն լեզվական, այլ նաև արտալեզվական գործոններով: Դժվար չէ կռահել, որ այսպիսի մոտեցումը լայն հեռանկարներ է բացում այս բարդ և ինչ-որ չափով դեռևս լրիվ չլուսաբանված գիտության՝ թարգմանության տեսության առաջ (նկատի ունենք ժամանակակից թարգմանության տեսության սոցիալ-լեզվաբանական և լեզվահոգեբանական քիչ ուսումնասիրված կողմերը):

Ինչ վերաբերում է տեղայնորեն-նշույթավորված ԴՄ-ներին, ապա դրանց առանձնահատկությունների սոցիալ-լեզվաբանական մեկնաբանությունը վրձնական դեր է կատարում թարգմանության ժամանակ: Հստ էություն, բոլոր դարձվածքներն էլ կարող են քննվել սոցիալական պայմանավորվածության տեսանկյունից: Սակայն դա չի նշանակում, թե բոլոր դարձվածքները դրսևորում են սոցիալական պայմանավորվածության միևնույն աստիճանը: Մենք քննության ենք առել դարձվածքների հենց այն խմբերը, որոնք առավելագույն չափով են դրսևորում այդպիսի պայմանավորվածություն: Այդ դարձվածքների թարգմանության համար բավական չէ իմանալ սոսկ այդ միավորները, անհրաժեշտ է քննել դրանք տվյալ երկրի մշակույթի, ժողովրդի պատմության հետ ունեցած կապերի առնչությամբ, անհրաժեշտ է թարգմանել դրանք՝ նկատի ունենալով ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական համատեքստի պահանջներն ու առանձնահատկությունները: Այս դարձվածքների թարգմանության ժամանակ հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ դրանք կարող են արտացոլել ազգային յուրահատկությունը կամ ամբողջությամբ, իրենց բոլոր բաղադրիչներով

² Л. С. Бархударов, Язык и перевод, М., 1975; В. Н. Комиссаров, Слово о переводе, М., 1973; *Եսկիկ* Лингвистика перевода, М., 1980; А. Д. Швейцер, Перевод и лингвистика, М., 1973; *Եսկիկ* Социолингвистические основы теории перевода («Вопросы языкознания», М., 1985, № 5); Л. К. Латышев, Проблема эквивалентности в переводе (докт. дис., М., 1985).

(Flect Street—անգլիական մամուլը, the Bard of Avon—Շեքսպիրի գրական անունը, to put on the black cap—մահվան դատաւճիռ հայտարարել): կամ մասնակի, իրենց առանձին բաղադրիչներով (to cost a pretty penny—թանկ նստել to cut off with a shilling—ժառանգությունից զրկել): Նման դարձվածքների լիարժեք թարգմանության համար կարևոր նշանակություն ունի նաև թարգմանվող լեզուն կրողների իրազեկության աստիճանը թարգմանելի դարձվածքի մշակութային-պատմական ֆոնին: Ե. Մ. Վերեշագինը և Վ. Տ. Կոստոմարովը դա սահմանում են որպես «այն տեղեկությունների ամբողջություն, որոնք կապված են տվյալ ժողովրդի որոշակի կենսական պայմանների, պատմական երևույթների և մշակույթի հետ»³: Այսպիսով, վառ արտահայտված ազգամշակութային բաղադրիչ ունեցող դարձվածքների յուրահատկությունը և դրանց իմաստային կառուցվածքում առկա ապրիորի, սոցիալական պայմանավորվածություն ունեցող ինֆորմացիան բավականին զրգրվարացնում են նման ԴՄ-ների թարգմանությունը:

Լեզվաբանական դրականության մեջ ազգային յուրահատկության երևույթը դիտվում է որպես «պրագմատիկ գործոն»⁴: Ա. Դ. Շվեյցերի կարծիքով «թարգմանության պրագմատիկ ասպեկտների էությունն այն է, որ բնագրի և թարգմանության տեքստերը սովորաբար հասցեագրված են տարբեր ընդունողների»⁵: Քանի որ այս «ընդունողներին» արտալեզվական ինֆորմացիայի ծավալը հաճախ չի համընկնում, ազգային երանգավորում ունեցող ԴՄ-ների լիարժեք թարգմանության համար թարգմանիչները դիմում են բնագրի տեքստի պրագմատիկ հարմարեցման: Պրագմատիկ ասպեկտի հաշվի առնելը հատուկ նշանակություն է ձեռք բերում ազգային երանգավորում ունեցող ԴՄ-ների թարգմանության ժամանակ:

Գոյություն ունեն դարձվածքների թարգմանության բազմաթիվ ձևեր ու եղանակներ: Դրանք կարելի է ընդգրկել երեք հիմնական խմբերի մեջ. ա) իմաստային թարգմանություն, բ) հաղորդակցական թարգմանություն, գ) իմաստահաղորդակցական թարգմանություն: Ազգային երանգավորում ունեցող դարձվածքների ժամանակ հիմնականում կիրառվում են վերջին երկու եղանակները, որոնց կանոնադրաբանք ավելի հանգամանորեն:

Թարգմանելի և թարգմանվող լեզվի կրողների սոցիալ-մշակութային փոքրձի տարբերությունը պարզապես անհնար է դարձնում բնագրի դարձվածքների մեքենայական տեղափոխությունը հայոց լեզվում, և թարգմանիչը դիմում է թարգմանության հաղորդակցական եղանակներին [գործառական համանմանություն (ֆունկցիոնալ անալոգ), նկարագրական թարգմանություն՝ փոխհատուցման մեթոդի կիրառմամբ]: Հաղորդակցական թարգմանության ժամանակ հիմնական շեշտը դրվում է հաղորդվող նյութի արտահայտչական կողմի պահպանման վրա: Թարգմանիչը փորձում է տալ լեզվական միավորի ներգործության ողջ ուժն այնպես, որ թարգմանությունը թարգմանվող լեզուն կրողի վրա ունենա այն նույն ազդեցությունը, ինչ որ բնագիրը՝ թարգմանելի լեզուն կրողի վրա: Դրա համար թարգմանիչը հրաժարվում է իրականություններից, որոնք առաջացնում են ուղղակի պատկերավոր գույգորդումներ միայն անգլիացի ընթերցողի մոտ և որպես դրանց գործառական համանմանություն օգտագործում համընդհանուր կամ չեզոք պատկերներով դարձվածքներ կամ էլ նկարագրում, բացատրում է այդ իրականությունները՝ չմոռանալով տվյալ համատեքստի փոխհատուցման հնարավորությունների մասին: Նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ թարգմանիչներն ավելի հաճախ օգտվում են գործառական համանման

³ Е. М. Верещагин, В. Т. Костомаров, Язык и культура, М., 1976, с. 150—151.

⁴ А. Д. Швейцер, Семантико-стилистические и прагматические аспекты перевода («Иностранные языки в школе», 1971, № 3, с. 15).

⁵ А. Д. Швейцер, Перевод и лингвистика, с. 17.

մանություններից, որոնց օգնությամբ համարժեքորեն վերարտադրվում են բրնձգրի տեղաշարժներն-նշույթավորված դարձվածքների և՛ իմաստային, և՛ հուզարտահայտչական կողմերը: Թարգմանության տեսաբանների համընդհանուր կարծիքով գործառական համանմանությունը կատարում է նույն դերը և թարգմանվող լեզվի ընթերցողի վրա թողնում է նույն ազդեցությունը, ինչ որ դրան զուգահեռ բնագրային օրինակը՝ թարգմանելի լեզվի ընթերցողի վրա:

Մեր օրինակներում որպես գործառական համանմանություն հանդես են գալիս կամ համընդհանուր պատկերներով միջազգային դարձվածքներ, կամ շեղոք պատկերներով տեղայնորեն-նշույթավորված դարձվածքներ: Օրինակ. «He'll never set the Thames on fire, said Soames»⁶. — «Նա երբեք էլ Ամերիկա չի հայտնագործի», — ասաց Սոմզերս⁷: Թարգմանիչը կարող էր պատճենել բնագրի դարձվածքը, քանի որ դրանում ծանոթ իրակություն կա (Թեմզան հըրդեհել), սակայն նա գերադասում է օգտագործել համապատասխան գործառական համանմանությունը (տվյալ դեպքում՝ համընդհանուր պատկերով միջազգային դարձվածքը), որի օգնությամբ հաղորդում է բնագրի ԴՄ-ի և՛ իմաստային, և՛ ոճաարտահայտչական կողմերը:

Կարելի է ասել, որ բնագրի տեղայնորեն-նշույթավորված դարձվածքները թարգմանվող լեզվում հիմնականում փոխարինվում են տեղայնորեն-նշույթավորված դարձվածքներով: Նման դեպքերում թարգմանիչը դարձվածքի ազգամշակութային բաղադրիչը զոհաբերում է բնագրի դարձվածքի հիմնական իմաստը ամբողջությամբ արտահայտելուն: Դարձվածքային մի պատկերի փոխարինումը մյուսով միանգամայն հիմնավորված և արդարացված է, քանի որ թարգմանության մեջ պահպանվում է բնագրի ասույթի ոճական գունավորումը: Օրինակ. «True enough that Europe was in Queer Street»⁸. — «Ժիշտ է, որ՝ Եվրոպան փակուղու առաջ է կանգնած հիմա»⁹: Այստեղ թարգմանիչը հրաժարվում է բնագրի դարձվածքում պարունակված իրակությունից (Queer Street — չքավորների, կարիքավորների երևակայական փողոց, այստեղից էլ «to be in Queer Street» դարձվածքի իմաստը. ծանր դրության, կարիքի մեջ լինել)¹⁰: Թարգմանության մեջ այս դարձվածքը փոխարինված է տեղայնորեն-նշույթավորված դարձվածքով, որի հիմքում ընկած է շեղոք պատկերի «փակուղու առաջ կանգնել»:

Վերցնենք մեկ ուրիշ նույնատիպ օրինակ. «Now», said Mc Gown, «why did you lie about that young blighter? You said he was in Paris. Are you playing fast and loose with me?»¹¹. «To play fast and loose» դարձվածքի համար Ա. Վ. Կունինի «Անգլերեն-ռուսերեն դարձվածաբանական բառարանում» բերված է հետևյալ բացատրությունը՝ «վարել անազնիվ, երկակի խաղ, անկեղծ չլինել, խաղալ մեկի զգացմունքների հետ: Այս արտահայտությունն իմաստը կապված է մի հին խաղի հետ, որ խաղում էին Անգլիայի տոնավաճառներում: Փայտի վրա պարան էին կապում և արձակում այնպես արագ, որ հանդիսատեսը չէր կարող որսալ այդ ձեռնածության պահը և անընդհատ տանուլ էր տալիս գրազը»¹²: Անշուշտ, շատ հայ ընթերցողներ չունեն այս դարձվածքի հետ կապված արտալեզվական ինֆորմացիան, և թարգմանիչը տվյալ ԴՄ-ը իրավացիորեն փոխարինում է համապատասխան գործառական համանմանությամբ. «— Դեհ, — ասաց Մեք Գաունը, — ինչո՞ւ ստեցիք այդ

⁶ J. Galsworthy. To Let, M., 1975, ch. 5.

⁷ Զ. Գալսուորթի, Վարձու է տրվում, թարգմ. Կ. Սուրենյան, Երևան, 1977, գլ. V.

⁸ J. Galsworthy, The White Monkey, M., 1976, part 1, ch. 12.

⁹ Զ. Գալսուորթի, Սպիտակ կապիկը, թարգմ. Կ. Սուրենյան, Երևան, 1979, մաս 1, գլ. XII:

¹⁰ А. В. Кунин, Англо-русский фразеологический словарь, М., 1967, с. 886.

¹¹ J. Galsworthy, The Silver Spoon, M., 1976, part 2, ch. 3.

¹² А. В. Кунин, Էջ. աշխ., էջ 704:

ջահել անպիտանի մասին: Ասացիք, որ նա Փարիզում է: Ի՞նչ է, իմ հոգու հե՞տ եմ խաղում»¹³:

Տեղայնորեն նշույթավորված բուն անգլիական դարձվածքներին է պատկանում նաև «Dutch» բաղադրիչով դարձվածքների մի խումբ: «Dutch» բառը առանձին վերցրած նշանակում է «հոլանդական», սակայն այն ընդգրկող վերախմաստավորված կայուն բառակապակցությունները բացասական երանգ ունեն և կապվում են XVII դ. անգլո-հոլանդական ծովային մրցակցության հետ: Հայ ընթերցողի համար տվյալ պատկերի չպատճառաբանված լինելը թարգմանիչներին ստիպում է նման դարձվածքները փոխարինել այնպիսի համապատասխանություններով, որոնք կհաղորդեն ղրանց և՛ իմաստային, և՛ ոճական առանձնահատկությունները: Հմմտ. «That precious young thing will have something to say about this or I'm a Dutchman»¹⁴ — «Այդ ջահելի թանկահին ջղերը չեն դիմանա, կսկսի լեզուն բլբլացնել: Ջոլիոն չլինեմ, թե չսկսի»¹⁵:

Ստեղծագործական տեսակետից հետաքրքիր են այն թարգմանությունները, որոնք փոխում են դարձվածքների պատկերային հիմքը, ըստ որում հաճախ թարգմանված տեքստում գործ ենք ունենում ոչ թե ԴՄ-ների, այլ հեզինակալին պատկերավոր արտահայտությունների հետ: Օրինակ. «I feel like a million dollars»¹⁶ — «Ինձ զգում եմ երջանկության զազաթնակետին»¹⁷: «He was as drunk as a lord last night»¹⁸ — «Երեկ իրիկուն հարբած էր տաղառի նման»¹⁹: Վերջին օրինակում օգտագործված «to be as a lord» դարձվածքը բառացի նշանակում է «լորդի նման հարբած լինել»: Անգլիացի ընթերցողին քաջ հայտնի է, որ դեռևս Գեորգ III թագավորի օրոք հարբեցողությունը համարվում էր ջենտլմենին բնորոշ գծերից մեկը: Հասարակության մեջ օրինակելի էր համարվում այն անձնավորությունը, որը կարող էր իրար ետևից խմել 2—3 շիշ: Իսկ այդպիսի հնարավորություն ունեին միայն լորդերը, ունեոր մարդիկ: Այս դարձվածքի հետ կապված արտալեզվական ինֆորմացիան հայ ընթերցողը կարող է և չունենալ, և դարձվածքի բառացի թարգմանությունը քիչ հասկանալի կլինի նրա համար: Ուստի թարգմանիչը բնագրի դարձվածքի հիմքում ընկած պատկերը փոխարինում է այլ պատկերով, դիմում պրագմատիկ հարմարեցման և հասնում բնագրի ու թարգմանության ասույթի հաղորդակցական-գործառական համարժեքության:

Եթե դարձվածաբանության մյուս շերտերի նկարագրական թարգմանությունը համարվում է ոչ ցանկալի, քանի որ կորչում է պատկերավորությունը և դրա հետ կապված հուզաարտահայտչական երանգը, ապա ազգամշակութային բաղադրիչ ունեցող դարձվածքների թարգմանության ժամանակ հատուկ նշանակություն են ձեռք բերում իրակությունների նկարագրությունը, բացատրությունը: Դա ինքնին հասկանալի է, որովհետև այստեղ շեշտվում է դարձվածքի կապը արտալեզվական իրականության հետ:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նկարագրական եղանակով թարգմանվում են տեղայնորեն-նշույթավորված այն դարձվածքները, որոնք արտացոլում են ազգային մշակույթը, ինչպես իրենց առանձին բաղադրիչներով, այնպես էլ ամբողջ կազմով: Օրինակ. «...who dropped his „h“ s and rec-

13 Ջ. Գոլսուորթի, Արժաթի գալը, թարգմ. Կ. Սուրենյան, Երևան, 1979, մաս II, գլ. III:

14 J. Galsworthy, The Man of Property, M., 1974, part 3, ch. 7.

15 Ջ. Գոլսուորթի, Սեփականատերը, թարգմ. Կ. Սուրենյան, Երևան, 1975, մաս III, գլ. VII:

16 S. Maughan, Theatre, M., 1985, ch. 29.

17 Ս. Մոսես, Թատրոն, թարգմ. Ջ. Հովհաննիսյան, Երևան, 1985, գլ. XXIX:

18 J. Galsworthy, In Chancery, M., 1974, part 1, ch. 3.

19 Ջ. Գոլսուորթի, Մուգակի մեջ, թարգմ. Կ. Սուրենյան, Երևան, 1977, մաս I, գլ. III:

ked of opoponax²⁰—«...որը խոսում է գոեհիկ լեզվով և էժանագին տնտեսականություն է տարածում շուրջը»²¹, «It's cost a pretty penny anyway» said Soames looking at Fleur²²—«Համենայն դեպ», ծախսն էլ լավակաճիճ մեծ է,— ասաց Սոմզը, նայելով Ֆլեորին»²³, Բերված օրինակներում նկարագրական թարգմանությունը միանգամայն հիմնավորված է, քանի որ դրա օգնությամբ հաղթահարվում է լեզվաէթնիկական արգելապատնեշը և նախադրյալներ ստեղծվում թարգմանվող լեզուն կրողների ճիշտ ընկալման համար։ Քիչ չեն այն դեպքերը, երբ թարգմանիչը դիմում է համակցված թարգմանության։ Այսպիսի թարգմանությունը որոշ հետադուրողներ անվանում են իմաստահաղորդակցական։ Նման դեպքերում պահպանվում են տեղայնորեն նշույթավորված դարձվածքներում եղած իրականությունները և միաժամանակ տրվում է դրանց բացատրությունը։ Հմտ. «I'm of age today. Quite an important day in my life, isn't it.»²⁴—«Այո, ես այսօր դառնում եմ չափահաս՝ քսանմեկ տարեկան։ Բավական կարևոր իրադարձություն է իմ կյանքում, այնպես չէ»²⁵։ Այս օրինակում թարգմանիչը ոչ միայն պարզապես թարգմանել է բնագրի դարձվածքը «չափահաս» բառով, այլև տվել է այն արտալեզվական ինֆորմացիան, որը պարունակվում է տվյալ դարձվածքի մեջ (քսանմեկ տարեկան)։

Ազգային երանգավորում ունեցող դարձվածքների թարգմանության ժամանակ երբեմն տեղի է ունենում ինֆորմացիայի կորուստ, բովանդակության աղավաղում։ Նման դեպքերում թարգմանիչը, ձգտելով ամեն գնով պահպանել բնագրի դարձվածքի ազգամշակութային բաղադրիչը, դիմում է բառացի թարգմանության։ Դրա հետևանքը լինում է այն, որ թարգմանության մեջ անհիմն կերպով նույնությամբ պահպանվում է բնագրի ԴՄ-ի արտահայտության պլանը, որը, սակայն, ոչինչ չի ասում հայ ընթերցողին նրա բովանդակության մասին։ Այսպես օրինակ. «The judge assumed the black cap and the prisoner still stood with the same air and gesture»²⁶—«Դատավորը դարձյալ սև թափալը դրեց գլխին։ Բանտարկյալը դեռևս կանգնած էր նույն տեսքով ու դիրքով»²⁷։ Այս դարձվածքը, որն արտացոլում է անցյալին վերաբերող իրականություն, կապված է անգլիական մի հին սովորության հետ, ըստ որի մեղադրյալի մահվան դատավճիռը հայտարարելիս դատավորը հագնում էր սև գլխարկ։ Այստեղից էլ «to put on the black cap» դարձվածքի նշանակությունը՝ մահվան դատավճիռ հայտարարել։ Հայերեն տեքստում բնագրի այս դարձվածքը թարգմանված է բառացի և ոչինչ չի ասում հայ ընթերցողին դրա իմաստի մասին։ Այդ պատճառով ճիշտ կլինի հրաժարվել տվյալ դարձվածքում պարունակված իրականությունից և բովանդակությունը տալ նկարագրական եղանակով։ Նման անհիմն թարգմանության հանդիպում ենք նաև հետևյալ օրինակում. «When dinner was announced, Mr. Dombey took down an old lady like a criminal velvet pin cushion stuffed with banknotes who might have been the identical old lady of Threadneedle Street, she was so rich and looked so unaccommodating»²⁸ «Երբ հայտարարվեց ճաշի մասին, միստեր Դոմբին իր

²⁰ J. Galsworthy, The White Monkey, part 1, ch. 7.

²¹ Զ. Գալսուորթի, Սպիտակ կապիկը, մաս I, գլ. VII:

²² J. Galsworthy, The Silver Spoon, part 2, ch. 8.

²³ Զ. Գալսուորթի, Արծաթե գդալը, մաս II, գլ. VIII:

²⁴ O. Wilde, Lady Windermere's Fan, New York, 1909, act 1.

²⁵ Օ. Ուայլդ, Երկեր, թարգմ. Գ. Հախվերդյան, Երևան, 1980, Լեդի Ուինդերմերիի հովհարը, գործող. I:

²⁶ Ch. Dickens, The Adventures of Oliver Twist, M., 1955, ch. 7.

²⁷ Զ. Դիկենս, Օլիվեր Թվիստի արկածները, թարգմ. Ա. Բաղարյան, Երևան, 1958, գլ. VII:

²⁸ Ch. Dickens, Dombey and Son, New York, 1964, ch. 10.

թևն առաջարկեց մի ծեր լեզիի, որը նման էր կարմիր թավշից պատրաստված ասեղնաբարձիկի՝ լցված բանկի շեկերով, այդ լեզին կարող էր նմանվել Թրեդ-նիդլը ստրիտի ծեռ լեզիին, այնպես հարուստ էր նա և այնքան չհարմարվող էր երևում»²⁹,

Այս դեպքում դարձյալ հայ ընթերցողը սխալ պատկերացում է ստանում բնագրի դարձվածքի իմաստի մասին: Չէ՞ որ ոչ բոլոր հայ ընթերցողներին է հայտնի, որ «the old lady of Threadneedle Street» արտահայտությունը անգլիական բանկի մականունն է, որ այս դարձվածքի ծագման աղբյուրը եղել է մի ծաղրանկար և որ այս դարձվածքն իր մեջ ապրիորի ինֆորմացիա է պարունակում ոչ միայն Թրեդնիդլը փողոցի մասին, որտեղ գտնվում է անգլիական բանկը, այլև երկրի տնտեսական կյանքում դրա ունեցած գործունեության, նշանակության մասին: Այնպես որ, թարգմանիչը պետք է ոչ թե մեքենայաբար պատճեններ տվյալ պատկերը, այլ մեկնաբաներ դարձվածքի իմաստը, նշանակությունը:

Վերը շարադրվածը թույլ է տալիս մեզ անել հետևյալ եզրակացությունները.

Ազգային երանգավորում ունեցող ԴՄ-ները կազմում են դարձվածաբանության այն շերտը, որտեղ տվյալ լեզուն կրող ժողովրդի կյանքի յուրահատկությունը, արտալեզվական համատեքստի առանձնահատկությունները գտնում են իրենց վառ և ցայտուն դրսևորումը: Դրանց թարգմանությունը ընթանում է տվյալ ժողովրդի ազգագրության, պատմության, մշակույթի, հետ առնչված: Այսպես կոչված երկրագրական ասպեկտի ներդրումը դարձվածքների ազգամշակութային բաղադրիչը վերարտադրելու համար անհրաժեշտ նախապայման է թարգմանության ընթացքում դրանց առավել հաջող համապատասխանությունը գտնելու դործում:

Ազգային երանգավորում ունեցող դարձվածքների լիարժեք թարգմանության համար ավելի հաճախ կիրառվում են հաղորդակցական եղանակները, որոնք օգնում են լեզուբանալ «լեզվաթնիկական արգելապատնեշը» և նախադրյալներ ստեղծում հաղորդակցական ակտի տարալեզու մասնակիցների լիարժեք հաղորդակցման համար:

Տեղայնորեն-նշույթավորված դարձվածքները գործառական համանմանության մեջ կամ նկարագրական եղանակով թարգմանելու անհրաժեշտությունը բացատրվում է արտալեզվական համատեքստի պահանջներով և թարգմանելի ու թարգմանվող լեզուների կրողների սոցիալ-մշակութային փորձի տարբերություններով:

Համակցված թարգմանությունների օգտագործումը պայմանավորված է նրանով, որ թարգմանիչը ցանկանում է պահպանել ազգային կոլորիտը և դարձվածքի պատկերային հիմքի ընկալումը հեշտացնել հայ ընթերցողի համար՝ բացատրելով դարձվածքի ընդհանուր իմաստի և նրա բաղադրիչների իմաստների միջև եղած կապը:

Թարգմանության նշված եղանակների ընտրությունը կախված է՝ ա) հայ ընթերցողի համար բնագրի դարձվածքի անսովորության աստիճանից (որքան այն բարձր է, այնքան հազվադեպ է պահպանվում թարգմանության մեջ տվյալ դարձվածքի ներքին ձևը), բ) թարգմանչի տրամադրության տակ եղած հայերեն դարձվածաբանական համանմանություններից, գ) դարձվածքի ամբողջական իմաստի և բաղադրիչների իմաստների փոխադարձ կապից:

Տեղայնորեն-նշույթավորված դարձվածքների թարգմանության ժամանակ ազգամշակութային բաղադրիչը, որպես կանոն, չի պահպանվում թարգմանվող լեզուն կրողների անհրաժեշտ արտալեզվական գիտելիքներ չունենալու պատճառով: Այս հանգամանքը թելադրում է օգտվել թարգմանության նկարագրական եղանակից կամ գործառական համանմանությունից, որոնց միջոցով թարգ-

29 Չ. Դիկինս, Դոմրի և Որդին, թարգմ. Ս. Ալեմյան, Երևան, 1957, գլ. XXXVI:

մանիչը գիմում է բնագրի տեքստի պրագմատիկ հարմարեցման և հասնում հաղորդակցական-գործառական համարժեքության: Ազգային երանգավորում ունեցող դարձվածքների թարգմանությունը մեկ անգամ ևս հաստատում է այն փաստը, որ թարգմանությունը հասարակականորեն պայմանավորված երևույթ է, և թարգմանության տեսությունը իր մեջ ընդգրկում է ոչ միայն միմյանց փոխազդող լեզվական համակարգերի ուսումնասիրությունը, այլ նաև դրանց սոցիալ-լեզվաբանական և լեզվահոգեբանական կողմերը:

ПЕРЕДАЧА НАЦИОНАЛЬНО-КУЛЬТУРНОГО КОМПОНЕНТА ПРИ ПЕРЕВОДЕ ОБРАЗНОЙ ФРАЗЕОЛОГИИ

АСМИК ТОВМАСЯН

Резюме

Наличие смыслового сдвига в семантической структуре образных фразеологизмов значительно затрудняет их перевод. Гораздо труднее поддаются переводу фразеологизмы, содержащие национальные реалии. В подобных фразеологических единицах особенности жизни народа-носителя языка, различные социальные факторы находят наиболее яркое и четкое выражение. Поэтому процесс перевода национально-окрашенной фразеологии идет рука об руку со страноведением, этнографией, социолингвистикой. При переводе исследуемых фразеологических единиц национально-культурный компонент, как правило, не передается из-за различия в социально-культурном опыте между носителями языка источника и языка перевода. Это обстоятельство диктует применение описательного перевода или перевода функциональным аналогом, в результате чего достигается прагматическая адаптация текста оригинала, нейтрализуется «лингвоэтнический барьер» и создаются предпосылки для обеспечения коммуникативно-функциональной эквивалентности.

Перевод национально-окрашенной фразеологии еще раз подтверждает тот факт, что перевод—явление не только языковое, но и социально-культурное, что это сложный процесс межъязыковой коммуникации, сфера взаимодействия языков и культур, где стратегия переводческого решения обусловлена не только языковыми, но и внеязыковыми факторами.